# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 49

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019Թ.ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի ԹԻՎ 35 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, որոշում եմ՝

1.Գյուլագարակ համայնքի ղեկավարի 2019թ. հունվարի 25-ի «Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա գտնվող ինքնակամ կառույցների օրինականացման մասին» թիվ 35 որոշման 1-ին կետի 8.8 ք.մ արտաքին մակերեսով բառերից հետո գրված «պահեստը» բառը փոխարինել «պահակատունը» բառով, 2-րդ կետի 8.8 ք.մ արտաքին մակերեսով բառերից հետո գրված «պահեստի» բառը՝ «պահակատան» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 21 թ. 02 03
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 50

### ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ, ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010 թ.-ի թիվ 186-Ն հրամանով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ որոշում եմ՝

1. Հաստատել հողամասի գծային չափերը և մակերեսը համաձայն Ա/Ձ « ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» կողմից տրված տեղադրական հատակագծի՝ հողամասի մակերեսը՝ 0,18955 հա:
2. Հողամասի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. 02 03
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 51

### ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԵՆ ՖՐԱՆԳՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱՐՈՏԱՎԱՅՐԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արեն Ֆրանգյանի արոտից հրաժարվելու մասին դիմումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 100-րդ և 101-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

1.Չեղյալ համարել ԱԳԿ-ի կողմից 03.06.2010թ. տրամադրված թիվ 0064807 վարձակալության իրավունքի վկայականը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թ. 02 03
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 52

## 06-029-0065-0005 ԵՎ 06-029-0065-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ,ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ՆՈՐ ՀԱՍՑԵԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վիլյամ Հարությունյանի կողմից 29.01.2021 թ.-ին ներկայացված դիմումը, անշարժ գույքի սեփականության թիվ 08122020-06-0018 և 08012021-06-0030 վկայականները, Ա/Ձ «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» - ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, նկատի ունենալով, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով,ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ՝ որոշում եմ.

1. Հաստատել 06-029-0065-0005 և 06-029-0065-0004 կադաստրային ծածկագրերի հողամասերի միավորումը ըստ Ա/Ձ « Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» կողմից տրված տեղագրական հատակագծի:
2. Օրինականացնել Վիլյամ Հարությունյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող 0.1773 հա հողամասում 2021 թվականին ինքնակամ կառուցված՝ 203.92 քմ արտաքին մակերեսով ճաշարանը, 28.0 քմ արտաքին մակերեսով հյուրատունը, 36.29 քմ արտաքին մակերեսով հյուրատունը և 4.25 քմ մակերեսով աստիճանավանդակը:
3. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 203.92 քմ արտաքին մակերեսով ճաշարանի համար 224320 /երկու հարյուր քսանչորս հազար երեք հարյուր քսան / ՀՀ դրամ, 28.0 քմ արաքին մակերեսով հյուրատան համար 30800/ երեսուն հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ, 36.29 քմ արաքին մակերեսով հյուրատան համար 39920/երեսունինը հազար ինը հարյուր քսան/ ՀՀ դրամ,4.25 քմ մակերեսով աստիճանավանդակի համար 4680/չորս հազար վեց հարյուր ութսուն/ ՀՀ դրամ, : Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման վճարի չափը կազմում է՝ 299720 / երկու հարյուր իննսունինը հազար յոթ հարյուր քսան / ՀՀ դրամ, որը

վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255000078 հաշվեհամարին: Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Փոփոխել հողամասի գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման հողամասից հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
5. 06-029-0065-0005 և 06-029-0065-0004 կադաստրային ծածկագրերի միավորումից ստացված 0.1773 հա հողամասին և հողամասում կառուցված հասարակական շինություններին տրամադրել նոր հասցե՝ Գյուլագարակ համայնք գյուղ Գյուլագարակ 2-րդ փողոց թիվ 56 Ճաշարան:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. 02 03
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 53

## ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐՈՒՄ ԵՎ ՔԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ, 06-029-0041-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարեկ Գագինյանի դիմումը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ–ի կողմից տրամադրված տեղագրական հատակագծերը,17.08.2020թ. N 17082020-06-0009 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը,ղեկավարվելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010 թ.-ի թիվ 186-Ն հրամանով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ, որոշում եմ՝

1.Հաստատել հողամասի ընդհանուր մակերեսը ըստ «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ- ի կողմի տրված տեղագրական հատակագծերի՝ 0.21726 հա:
2. Հաստատել Գյուլագարակ համայնքի, Գյուլագարակ գյուղի 1-ին փողոց 1-ին նրբանցք թիվ 4 հասցեում գտնվող տարանջատման արդյունքում առաջացած երկու միավոր անշարժ գույքերի նոր փոստային հասցեները

- 0.18108հա հողամասի և հողամասում առկա բնակելի տան և բաղնիքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք, գ. Գյուլագարակ 1-ին փողոց 1-ին նրբանցք թիվ 4 բնակելի տուն:

- 0.03618հա հողամասի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք, գ. Գյուլագարակ 1-ին փողոց 1-ին նրբանցք թիվ 4/1 հողամաս:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 54

### ՍՈՒՍԱՆՆԱ ԴԱՎՈՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Սուսաննա Դավոյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Հոբարձի գյուղում գործող ԱՁ Սուսաննա Դավոյանի հայտը, նրան տալ ծխախոտի և ոգելից ու ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն 2021թ. 1-ին եռամսյակի համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ.Պ. ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 21 թ. 02 04
գ.Գյուլագարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 55

## ՍՈՆԱ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Սոնա Ավագյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում գործող ԱՁ Սոնա Ավագյանի հայտը, նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2021թ. 1-ին և 2-րդ եռամսյակներ համար:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 21 թ. 02 04
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 56

ՍՈՒՍԱՆՆԱ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Սուսաննա Այվազյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում գործող ԱՁ Սուսաննա Այվազյանի հայտը, նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2021թ. 1-ին և 2-րդ եռամսյակների համար:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ.Պ. ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2021 թ. 02 04
գ.Գյուլագարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 57

### ԳԱՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Գարիկ Գրիգորյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղում գործող ԱՁ Գարիկ Գրիգորյանի հայտը, նրան տալ ծխախոտի և ոգելից ու ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն 2021թվականի 1-ին եռամսյակի համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ.Պ.** **ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

20 21 թ. 02 04
գ.Գյուլագարակ